

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

ՄԻ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ, — ՀՐԱՏ. ԸՆԿ. — ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊ. ՍԵՂԻՐԱԿԵԱՆ.

Օ՛հ, որքան դժար է մի գրողի գրութիւն, որը խօսք է տւել իրօրութիւնների շրջանից չը դուրս գալ: Խօսի՛ր միայն եղածից... Իսկ եթէ հասարակական կեանքի կարեւոր արտայայտութիւնների շնորհիւ սակաւ և Աստուած միայն գիտէ, թէ որքան և որքան արդ ճիշդ է մեր ներքին կեանքի նկատմամբ: Գէպեր, որոնք փառլամենտի պատկերն տան մի եռա-ցող, ասեղծող և վերաստեղծող կեանքի, դէպքեր, որոնք վկայութիւն տան մոռեցի՛ր լաղթութեան և բարձրացնեն հասարակութեան բարոյական մա-կերտութիւնը, — արդարեւ դէպքեր ալեքան և ալեքան քիչ են, որ մեր հասա-րակութեան ներքին կեանքի մասին կարելի է ասել զրեթէ չունը՝ ինչ մե-ռած բնութեան մասին, որը պարբերապէս տեսնում է իւր զարունը, իւր ամառը, իւր աշունը, իւր ձմեռը, լալց ատանց որ չորս զօրեղապէս տար-բերէին իրանց նախորդներից: Մի նոր վարդիլիտ հաղիւ ներկալ ձմրան մասին ալապէս դատէր, քան ինչ երգւած է երկու հազար տարի ատալ:

Այդ սառնացած մարմնի մէջ հարկաւոր էր արիւն ներս մտցնել զըզ-րոցական կրթութիւնով, կամայ-կամաց, իսկ երբեմն երեքորական ցըն-ցումներով ատրօֆիացած մասերը կենդանութեան բերել: Այդ վերջին հոգ-սը ամեն երկիրներում քաշկ է մամուլը և չունը եղաւ նաեւ մեղանում: Այսօրին երևան գալ թերթեր՝ մեծ թէ փոքր, որոնք լակական գերի մէջ մտան՝ սկսած 50-ական թւականների վերջերից և շարունակում են չուն գերը ցալմ:

Առանց չափազանցութեան կարելի է պնդել, որ մամուլը ալսօր դա-ռած է ժողովրդի օրգանական պահանջներից մէկը. և, եթէ չուն արդ ժողո-վորդը ունի շատ ուրիշ պահանջներ, չունքան և դիւ աւելի օրգանական,

քան մամուլը, վերջինս, սակայն, համեմատապէս աւելի կենդանութեան մէջ է, քան մնացածները:

Առանց այն մամուլի դոլութեան, որը ունեցել է հալութիւնը վերջին երեսուն տարիներում,—մեր ազգի մտաւոր պատմութիւնը գէթօրից շատ չէ բարձր և բարոյական բարձրութիւնը—հազիւ մի երկու աստիճան է գէթօրից բարձր:

Այս բոլորը կարելի է պատմաբանօրէն ցոյց տալ. բայց ի՞նչն է առիթ տալիս ինձ այս ելութիւն գիպչելու:

Առիթը այն է, որ մեզանում մի դեռ ևս չ'եղած կուսակցութիւն է կազմուել՝ մամուլի միջոցով կատարւած ժողովրդական լաւաջողութիւնը հերքելու և ամեն եղանակներով ջանալու, որ մեր մամուլը չքանալ, պահուել նրան սխալաստիկները ձեռքը:

«Երբ օրագրութեան դժբաղդութիւնը այն է, ասում է այդ կուսակցութեան թերթի մի առաջնորդող լօգաւածը, որ նորա ղեկավարները մեծ մասամբ... վատ երաժիշտներ են, գրականական մարդիկ չ'են, պատահական անհատներ են: Գոցա շատերի նոյն իսկ գրականութեան ասպարիզում երևան դալը մի տեսակ danse macabre—ուրականների կաքաւ է գիշերալին մթութեան մէջ, որի չարատեսութիւնը կախած է ընթերցող հասարակութեան մէջ տիրապետող մթութեան, խաւարի չարատեսութիւնից:

«Որքան շուտ լուսաւորւի այդ հասարակութիւնը, որքան շուտ զարգանալ նորա ճաշակը և բարձրանալ նորա պահանջը, մի խօսքով որքան շուտ տարածւի նորա մէջ լուսաւորութիւնը և գիտութիւնը, այնքան շուտ վերջ կը լինի «մեռելալեների պարիկ» և այնքան շուտ գրականութիւնը կ'անցնի գրականական մարդկանց ձեռքը: Այդ ժամանակ խաւարի որդիք հազիւ թէ առիթ ունենան վրդովելու հալ ընթերցողի հանգստութիւնը»:

Այս տողերի խորիմաստութիւնը իւր ամբողջ ծաւալով իմ ընթերցողը կ'ըմբռնի, եթէ նրան ասելու լինիմ, որ այդ գրականական մարդիկը, որոնց ձեռքն են ուղում որ անցնի մեր գրականութիւնը, մամուլն էլ հետը, ուրիշ անձեր չ'են, քան Նոքա, որոնք նստած են իւր գրական վաստակներով հալութեան և աշխարհին չալոնի «մեծ ֆիլօսօֆ և պատմաբան» պ. Արզար Յովհաննիսեանի խմբագրական գրասենեակում: Եւ այդ անձերն են խմբագրի ասիստենտները, որոնցից իւրաքանչիւրը մեր գրականութիւնը «հարատացրել» է ամենքի ուշադրութիւնը գրաւած գրական վաստակներով, վերաբերեալ մեր ազգի անցեալին, մեր լեզուին, աշխարհալին կենցաղին, ընդհանուր քաղաքականութեան, էսթետիկին, սոցիալական և տնտեսական բարդ խնդիրներին, քննադատութեան և այլն և այլն: Ո՛ւմը, ո՛ւմը չ'են չալոնի այդ ղեկավարի լուսով պատած գրասենեակի այդ կենդանի պարօղների անունները. պատմութիւնը արդէն սրբա-

գործած է նոցա, և ամօթ է, որ ընթերցողներս չ'իմանան ա՛ն, ինչ ալդ-քան հանրածանօթ է, Դոքա են՝ մեծ ֆիլօզօֆ և պատմաբան պ. Աբգար Յովհաննիսիանից զուրս՝ պ. Նեգիրբարեան, Մեսրոպից Վստոյ հայոց տառե-րի երկրորդ գտնող Յարութիւնեան (Ղօրդ), Քարամեան, լաւ երաժիշտ և պարող Սաղուբեան և Շիրվանդադէ:

Բայց կատակերգութեան ալդ միայն առաջին մասն է: Նրկորդը կարեո-րագոյն է առաջինից, ՍԷ ևս, իբր քրօնիկեօր, կատարող իրողութիւնների արձանագրող, բնաւին անկարեօր չեմ գտնում հաղորդել ալդ:

Խմբագրութիւնը, պատրաստելով մի ալդպիսի մանիֆեստ արձա-կելու, ինչպիսին է վերը վիշած չօղածը, սկսել էր իւր բաժանորդա-գրութիւնը դեռ ևս ամառը, շարունակելով ա՛ն մինչ օրերս ալնպիսի և-ւանդով, ինչպէս դեռ ոչ ոք տեսած չէր: Որպէս գիւթական գաւաղանի նշանով, «Արձագանք»-ի բոլոր գրականական մարդիկ սկսեցին խօ-սել բարու և դեղեցիկ մասին: Նրանցից ո՛րն է, չը գիտեմ, սկսեց խօ-սել, ո՛վ կը կարծէր... պատկերներ չհաշարի հրաշալի տպաւորութեան մասին մարդուս ոգու վերապ: ՍԷ սկսեցին մինը միւսի վտտից, ամօթ չը լինի ասածս, զուռնալ փչել պատկերաղարդ թերթին բաժանորդ գրել տալու համար: ՍԷ ալդ գրականական մարդիկ չը գոհացան միայն դրա-կանօրէն քարոզելու լօգուտ պատկերաղարդ թերթի բաժանորդագրութեան, ալ և զուրս եկան փողոցը, տեղեր գրաւեցին պօլիցիական ագենտների նման, զուրս եկան անգամ քաղաքից, բուռները լիքը տոմսակներով, որ ուղղղ-չ'ուղղղի ալըր դնեն: ՍԷ դրեցին, ամենքի ականջին տղալով բարու, ճշմարտի և գեղեցիկ մասին ալնքան, որքան գրականական մարդիկ կարող էին անդիր սովորել գերմանական կլասիկներից: Հոկտեմբերին պէտք է սկսէր ալդ նոր թերթը, եթէ միայն 1500 բաժանորդ գրէին: Բարին և գեղեցիկը, բայց մանաւանդ ճշմարիտը, ալնքան չուտով մատչելի չը լինելով հալ ժողովրդին, հոկտեմբերին ալդ թւով բաժանորդներ չը գտնեցին: «Դեկտեմբերի 1-ից կը ստանաք անպատճառ» — լատարարեց բարու, գեղեցիկ և ճշմարտի աւաղանի մէջ դեռ ևս չը մկրտած «Արձա-գանք»-ը: Դեկտեմբերը եկաւ. «Յունեարին կը ստանաք անպատճառ», վե-րըստին լատարարեցին գեղեցիկութեան և ճշմարտութեան նոր առաքեալ-ները: ՍԷ հասարակութիւնը սպասում է... սպասում, թէ ինչպէս ա՛ն գրա-կականական մարդիկ, որոնք ոչ առանձին առանձին և ոչ էլ միասին խմբած չը կարողացան մի շարաթաթերթ կենդանի օրդան դարձնել, նա կենդանի օրդան պէտք է դառնալ, եթէ նոցա չօղածների կողքին մի մի պատկեր տպած լինի: Բոլոր խնդիրը սա է, թէ բաժանորդները ինչո՞վ պէտք է աւելի զբաղեն. բնադրո՞վ թէ հալկական հանճարի հետ դեռ ևս ոչ մի կապ չ'ունեցող պատկերներով: Սթէ բնագրով — «Արձագանք»-ի գրա-կականական մարդիկ իրանց գոյնը և ի՛նչ լինելը ցոյց տուցին ցալփմ իրանց գործունէութիւնով: Բժախնդրութիւն, նեղսրտութիւն և գրական ամու-



լուծվեւ...—ահա ալն անուշները, որոնք աւելի կը սաղէին այդ խմբին, քան գրականական ածականը, որը գործով է ձեռք բերում և ոչ չափաբարութիւնով և լանդգենութիւնով: Այս տողերը ես գրում եմ, որպէս պարտաճանաչ քրօնիկեօր: Հասարակական երևութներն են դոքա, որ պէտք է արձանագրել:

Վերադառնալ լոգաժի վերայ ես նախում եմ, ի հարկէ, ոչ որպէս մի գրական գործի վերալ, այլ որպէս մի կուսակցութեան նկրտումների վերալ, որը լուր ապագայ օրգանի լաջող բաժանորդագրութիւնը ուզում է բացատրել նորա ներքին արժանաւորութիւններով:

Փարիսեցիք, ոչ ոքի չէք կարող համոզել, որ ձեր թերթի բաժանորդագրութեան լաջողութիւնը որ և իցէ կապ ունի ձեր անցեալ գրական գործունէութեան հետ. և նոյն խկ «Արձագանք»-ը պատկերազարդ դարձնելու զաղափարը ծնւեց ձեզանում, երբ դուք տեսաք ներկայ «Արձագանք»-ի գուրկ լինելը որ և է ներքին արժանաւորութիւնից: Այսքան մարդիկ միասին հաւաքած, դուք, հրատարակելով տարին ամբողջ հարիւր թերթ, չը կարողացաք «Արձագանք»-ը գրական կենդանութեան աղբիւր դարձնել, և փոխանակ գրական գործունէութեան, դուք ձեզ անձնատուր արիք բաժանորդներ գտնելու արհեստին. և աչօր դուք գալիս և դժոխքի ծնունդներ էք չափարարում նրանց, որոնք աշխատել են ձեզնից շատ աւելի...

Իբր հասարակական երևութների արձանագրող, ես պարտք եմ համարում ընթերցողներին ուշքը դարձնել այդ գոյնի նոր կուսակցութեան և սորա ղեկավար խմբի անդամների վերալ:

Ընթերցողը երևի լիշում կը լինի «Մուրճ»-ի 4-րդ №-ում ներքին Տեսութեան մէջ տպւած մի լոգաժը «Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան» մասին: Այդ լոգաժում ապացուցւում էր, ի միջի այլոց, և այս միտքը, թէ հրատարակչական գործի համար հասարակական—ընկերական կազմակերպութիւնը գործի լաջողութեան չէ նպաստում: Մի աջնպիսի ժամանակ, երբ ամենքը այդ ընկերութեան վերայ մեծամեծ լոյսեր էին դնում և նորա ապագայ գործունէութեան համար գրում էին լոգաժներ լոգաժների վերալ, «Մուրճ»-ի աչն կարծիքը կարող էր շատ համարձակ երևալ, նամանաւնդ որ այդ միտքը լալտնեց մի աջնպիսի դէպքից փառլ, որով հին անգործ վարչութիւնը փոխւեց, իսկ նորա տեղը բռնեց մի նոր վարչութիւն և մի նոր խմբագրական մասնաժողով, որոնց անդամների մեծամասնութիւնը ամեն տեսակ լաւ լոյսերի տեղիք էին տալիս:

Բայց ահա՛ աչն օրից անցել են ութ երկար ամիսներ: Մասնաւոր տեղեկութիւններից ես զիտեմ, որ այդ ընկերութեան վարչութիւնն էլ,

խմբադրական մասնաժողովն էլ մեծ եռանդ են ցույց տալի... Նխատերի մէջ, կարծեմ շարաթ չէ անցել, որ մի կամ աւելի Նխատ չը լինի կապացած, Ուրեմն մտածել, թէ նորակազմ վարչութեան և խմբադրական մասնաժողովի անդամները չեն կամեցել գործ չինել—ալդ չի կարելի, Ընդհակառակը՝ նոքա դադրել են ալդքան ու ալդքան լաճախ Նխատեր կազմակերպ, որոնցից խրաքանչիւրը պատճառում է ամբողջ ժամիրի կորուստ, և մենք գիտենք, որ ալդ անդամները ամենքն էլ գործի տէր մարդիկ են, և գիտեն գնահատել ժամանակը, ժամը, րոպէն անդամ:

Ի՞նչ դուրս եկաւ, սակաւն, ալդքան երկար ամիսների տոկուն գործունէութիւնից: Նրեակալեցէ՛ք, ընթերցող. ալդքան ու ալդքան Նխատեր կազմակերպ, տասը թէ ո՛րքան մարդկանց—և ալն էլ դեռ ի՞նչպիսի մարդկանց—խելք խելքի տալով, մի քանի հաղար բուլլի էլ արկղում դրած, ընկերութիւնը վերջապէս զուրա բերեց մի հատիկ լղարիկ-լղարիկ գրքուկի հըրատարակութիւնը: «Սոկրատէս»,—դէ՛ դուք ամենքդ ալդ բրօշիւրի լապտարարութիւնը կարդացած կը լինէք բոլոր թերթերում: Ահա՛ ալդ իմաստուն մարդու մասին ալդ բրօշիւրն է, որ ցալժմ ծնւել է ընկերութեան երկունքից: Աւ ասել, թէ ալդ ընկերութիւնը ունի հարիւրից աւելի անդամներ, ունի վարչութիւն, խմբադրական մասնաժողով... ձիւղ է, որ ալդ ընկերութիւնը, բացի բրօշիւրներից, վճուել է տպել նաև երկու ալ գրքեր, մէկը՝ վերաբերեալ շերամապահութեան, իսկ միւսը՝ Պալատանեանի հալոց պատմութիւնը: Բայց խօ փնստ է, որ մինչև աչսօր, աչսինքն՝ աչս ութ ամսում, ընկերութիւնը հրատարակել է միայն մի բրօշիւր. իսկ մասնաւորապէս ինձ լալտնի է, որ միւս գրքերի տպագրութիւնը դեռ ևս սկսւած էլ չէ: Միթէ, պարոններ, վտանգաւոր ոչինչ չէք տեսնում գործունէութեան ալդ աստիճանի դանդաղկոտութեան մէջ: Զէ՛ թէ դրանով կարող է ընկերութեան անունը կոտրւել: Ինչո՞ւ էք կոտրում նորա անունը, լանուն ինչ բանի դուք ալդքան դանդաղ էք շարժւում: Ո՞վ է մեղաւորը: Ընկերութեան գործերը լանձնւած են երկու մարմինների՝ խմբադրական մասնաժողովին և վարչութեան: Թէ արդեօք խմբադրական մասնաժողովը միանգամայն լաւ ծրագիր ունի՞ պատրաստած իւր գործունէութեան համար, թէ ոչ—ալդ ևս չը գիտեմ, և առ ալժմ դեռ ինձ հետաքրքրողը ալդ չէ: Աս գիտեմ, որ նա վճուել է աչս և ալն գրքերը տպել և գիտեմ, որ դորա համար հարկաւոր փողը կալ. գիտեմ և ալն, որ, երբ խմբադրական ժողովը մի բան վճուել է—պրծել, մնացածը վարչութեան գործն է. նա է ընկերութեան գործադիր մարմինը. նա պետք է հոգալ, որ վճիռները կատարւին: Ինչո՞ւ չեն կատարւում ալդ վճիռները: Պատասխան՝ մեղը ընկնում է վարչութեան վերալ, որը անդարծ է երևում: Աւ որովհետև վարչութեան մէջ զխաւորը նորա նախապահն է, մեղը ընկնում է վերջինիս վերալ: Ալդ ալդպէս լինելուց վետու, ևս կ'ասեմ խմբադրական ժողովին.—ձեր ընտրած գրքերը լաւ են և արժանի ամեն ուշադրութեան: Բայց

ձևաճանաչման եղևք վճռելու արժան գրադարանի խնդիրը: Հալ երեսաները շատ շուտով սպառուժւում են բոլոր ալն մանկական գրքերը, որոնք կան հալոց գրականութեան մէջ. էլ գրանից դէնը՝ նորա կարդալու բան չեն դուտու: Ալդ խնդիրը մեծ խնդիր է, եթէ հեռու նալէք: Մեզ հարկաւոր են մի քանի հարիւր գրքովկներ և գրքեր՝ երեսաների և պատանիների ընթերցանութեան համար—արժան գրադարանի խնդիրը մօտաւորապէս լուծած լինելու համար: Մեր դպրոցներից սպասուող օգուտի կիսից աւելին ուղղակի կորչում է ալդ պակասութեան պատճառով, որի վերալ ամենից առաջ մօտածողը Հրատարակչական Ընկերութիւնը պէտք է լինէր: Ժամանակը գնում է ու ամենակին չի հարցնում, թէ ով ի՞նչ և ո՞րքան է չինել. նա գնում է առանց մեզ նալելու: Եւ մենք, փոխանակ նորա հետ միասին գնալու, ոչ միալն ալդ չենք կարողանում, ալ նորա չետից անգամ դրնալ չենք կարողանում, և անքան չետ ենք մնում, որ մոռանում էլ ենք թէ նա մեր առաջից գնացել ու անհետացել է:

Անցեալ ամիս թեմական առաջնորդի փոփոխութիւն եղաւ Թիֆլիսում: Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի տեղ վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ նշանակեց Մամբրէ եպիսկոպոս Սանասարեան: Մեծ եղելութիւն, մեծ իրարանցում Թիֆլիսի դանազան շրջանների մէջ:

Ես լաւ վիշում եմ Արիստակէս եպիսկոպոսի Թիֆլիս գալը: Ալդ էր 1883 թականի, կարծեմ, մարա ամսին: Ալդ անձնաւորութիւնը ինձ անչալտ էր, որպէս նա և շատ շատերին: Թիֆլիսը, կարող եմ ասել, Արիստակէսին չէր ճանաչում: Նա ոգևորութեամբ չ'ընդունեց, ալդ ես լաւ վիշում եմ. բաց դրանով Թիֆլիսի ժողովուրդը և կամ որ և իցէ մի շրջան ոչ միալն թշնամութիւն, ալ և ոչ մի թերահաւատութիւն ցոլց չը տեց նորա նկատմամբ: Նա ուղղակի ընդունեց նրան, իբր մի իշխանաւորի, որին ոչ ինքն էր ճանաչում և ոչ էլ նա, սրբազանն էր քաղաքը և թեմը ճանաչում: Ես չեմ վիշում, որ նորա մասին որ և իցէ վատ բան խօսած լինէին: Ընդհակառակը, ծանօթներ կալին, որոնք գովում էին նրան, առանց սակալն որ և իցէ ոգևորութիւն ցոլց տալու: Ամենամեծ գովեստը սա էր, որ հանգուցեալ Գէորգ IV կաթողիկոսը, իւր մահից առաջ, նշանակել էր Արիստակէս սրբազանին Թիֆլիսի առաջնորդ: Գաարդէն մեծ բան էր, մի երիտասարդ եպիսկոպոսի ուղարկել Թիֆլիս, որի նախկին առաջնորդները եղած են անուանի արքեպիսկոպոսներ, հոգևորականութեան մէջ մեծ դիրք լուծած և ազդեցիկ մարդիկ՝ Սարգիս եպիսկոպոս Ջալալեան, Նախկին Մակար արքեպիսկոպոս, ալժմ կաթողիկոս, Գաբրիէլ արքեպիսկոպոս Ալվաղուսի: Ալդ, կրկնում եմ, մի մեծ պատիւ էր, որ տրեց մի երիտասարդ և դեռ ես նոր ձևադարձ եպիսկոպոսի:

Երիտասարդութիւնը ուրախ էր ալն բանից, որ թեմը կ'ունենալ մի

առաջնորդ, որի թևերը կապկապած չեն աւանդական լարաբերութիւններով և որի միտքը բաց կը լինի աւելի թարմ և չառաջադէմ շրջաններին համար: Ինչ և իցէ, երկաստարդութիւնը զգում էր, որ, թէպէտ Գրեպերի պատմական ֆիլիոսոֆապութեան համար այդ եպիսկոպոսը, զեռ ևս իւր վարդապետ հղած ժամանակ, ձեռնհաս թարգմանիչ չէր, բայց և այնպէս ուրախալի էր՝ տեսնել մեր բարձր հոգեւորականութեան մէջ անձն, որը շփուել էր բարձր մտքերի հետ: Զգտումն կար, — այդ մեծ բան էր զոնէ՝ չառաջդիմական կուսակցութեան համար:

Եւ իրօք, նորեկ առաջնորդը շուտով ցոյց տւեց իւր ղիտաւորութիւնը՝ բաւարարութիւն տալ հասարակական կարծիքին: Իսկ հասարակաց կարծիքը ի՞նչ էր պահանջում: Ահա՛ ինչ, նա զոնում էր, որ հոգեւորական դատակարարը առհասարակ իւր պաշտօնի բարձրութեան վերաջ չէ կանգնած, գլխաւորապէս այն պատճառով, որ քահանաները, առհասարակ, անուսում են, հոգեպէս և մտաւորապէս բաւականաչափ բարձր չեն՝ իրանց սուրբ կոչման համապատասխանելու համար: Իսկ մենք ամենքս գիտենք, որ քահանաները, նոյն իսկ իրանց բարձր կոչումով, նաեւ հասարակական գործիչներ են: Հոգով ղեկավարներ լինելով, նոքա նաեւ շատ բաներում մտքերի և զգացումների ղեկավարներ են իրանց հոված հօտի մէջ: Այդ ցաւին դարմանելու համար իմացեց, որ Արիստակէս սրբազանը չաւտարարել է և կամ վճռել՝ աղէտներին քահանայ չը ձեռնադրել:

Ժամանակը ցոյց տւեց, որ նոր առաջնորդը պահեց իւր խօսքը: Եւ իրօք, որքան ինձ չալանի է, նա չը ձեռնադրեց ոչ մի քահանայի, որը զոնէ՝ Ներսիսեան Գպրոցում աւարտածի չափ ուսում չ'ունենար:

Ի հարկէ, այդ զեռ չի նշանակում, թէ նա իւր թեմը հարստացրեց կրթած և ուսումնական քահանաներով, ինչպէս այդ ցոյց են տալիս «Տիֆլիսսկիւն Արտոկը» և «Մշակը»: Ո՛չ, թեմը չը հարստացաւ այդ տեսակ քահանաներով: Եւ զոնէ՝ միմիայն մէկին եւ ճանաչում այս վերջին եօթ տարիներում քահանայ դառած, որը բարձր ուսում է ստացած. մի երկրորդն էլ, թէև ուսումնական կրթութիւն չ'ունի, բայց իւր անցած ասպարիզով սովորական քահանաներից անշուշտ բարձր է կանգնած: Բայց, ինչ և իցէ, մի քաջ առաջ կատարւեց թէ ոչ այդ խնդրի նկատմամբ: Պատասխան. — այո՛, կատարւեց: Դէհ, բանն էլ հէնց դրանումն է:

Նոյն այդ քահանաների նկատմամբ, այդ ո՛վ չի լիւում, հասարակաց կարծիքը պահանջում էր ապահով և պատահմունքներից ազատ կեցութիւն: Առաջարկում էին անգամ ուսման նշանակել: Ի հարկէ, ինչպիսիք չ'ուսումնասիրւեց ոչ մի կերպ: Բայց Արիստակէս եպիսկոպոսը ջանք գործ դրեց խնդրի լուծելուն նպաստել. նա հիմնեց մի «զանձարան» քահանաների ապահովութեան համար: Եւ լաւ չեմ ծանօթ այդ զանձարանի կանոնադրութեան հետ, բայց անկասկած է, որ զանձարանի հարստանալու միջոցները անուպառ աղբիւրներից են և ոչ պատահական: Ասելս այն է, որ և այդ կողմից քաջ արեց զէպի առաջ: Իսկ գլխաւորը այդ է:

Իբրև թեմի հետ անծանօթ, նա գնաց ու շրջեց աղջ մեծ թեմը ուսումնասիրելու համար: Նա հրատարակեց իւր ուղևորութիւնը «Արձագանք» շաբաթաթերթում: Նորա «ուղևորութիւնը» նոր երևոյթ էր մի ուրիշ կողմից. — մի թեմական առաջնորդ հրապարակ էր գալիս իբր գրող: Նա ստեղծում էր իւր և ընթերցող հասարակութեան մէջ ալն կապը, որից խորշում են շատ ուրիշները:

Թիֆլիսի թեմը ալն առանձնապատկութիւնը ունի, որ աղջ տեղ շատ կան տեղեր, ուր հազերը իրանց լեզուն մոռացել են: Միակ միջոցն էր աղջ դժբաղդ հանգամանքի դէմը կռուել: Ժխական դպրոցներ հաստատուել Արիստակէս սրբազանը աղջ կողմից լաւ գործիչ հանդիսացաւ: Յառում եւ, որ ձեռքիս չը կան նիւթեր, որոնք ինձ միջոց տալին խմանալու, թէ Թիֆլիսի թեմում ո՞րքան դպրոցներ են հաստատուել Սեդրակեանի օրերով և թէ եղածները ո՞րքանով բարւոքւեցին: Բաց եւ չեմ կարող լուսովեամբ անցնել, որ, որքան էլ Արիստակէս եպիսկոպոսը լաւ գործած լինի ծխական դպրոցների համար, նա չը կարողացաւ թեմի դպրոցներից կարևորագույնը, Ներսիսեան Գպրոցը, ըստ կարելոյն, բարեկարգել:

Նոյն հասարակաց կարծիքը վաղուց ուշադրութիւն էր դարձնում քարոզների բացակայութեան վերաջ եկեղեցիներում, որպէս նաև կանոնաւոր երգեցողութեան վերաջ: Ինչ վերաբերում է դրանց, Արիստակէս սրբազանը, որքան եւ դատել կարող եմ, քիչ չառաջադիմութիւն մտցրեց իւր թեմի մէջ: Քարոզներ աւելի չաճախ էին լինում, քան առաջ, բաց քարոզչական գործը չառաջ չը գնաց, դարկ չը ստացաւ:

Երգեցողութիւնը, կանոնաւոր երգեցողութիւնը առաջ չը գնաց Արիստակէս եպիսկոպոսի օրերով: Ոչ միայն թեմի մէջ, այլ անգամ Թիֆլիս քաղաքի մէջ կանոնաւոր երգեցողութիւնը չ'ընդհանրացաւ, չը կազմակերպւեց, նոր դարկ չը ստացաւ:

Ի վերջոյ Արիստակէս եպիսկոպոսը ճանաչեց որպէս անշահատէր, — աղջ մէկ. իսկ երկրորդ, որը կապ ունի դորա հետ՝ նա իւր անձնական դիրքը ծառայեցնում էր հանրօգուտ գործերի համար: Արիստակէս սրբազանը անձամբ պատում էր իւր ներկայութիւնով ալն հանգուցեալի թաղումը, որը աղգալին հաստատութիւնները իւր կտակի մէջ մոռացութեան չէր տւել: Որտեղ նա ներկայ էր, կարելի էր արդէն հաստատ պնդել, որ աղգալին որ և իցէ հիմնարկութիւն մի քանի հարիւրով կամ հազար բուքլիով հարստացել է: — Դա միեղանակ էր՝ աղջ հիմնարկութիւնների զարգացմանը նպաստելու, որը չտուկ էր Արիստակէս սրբազանին և որը նրան մեծ պատիւ է բերում:

Թեմը, չամենալն դէպս, նա թողեց բարեկարգ դրութեան մէջ: Իւր չաջորդին է վերապահւած չը կատարած գործերը կատարել, իսկ սկսածներից լաւերը — շարունակել:

ԼՈՒՍԻՆԻ